Սանթրյան Վ. - Քառասուն տարվա գույն ու գիծ. Նկարչի տանը բացվեց Արամ Իսաբեկյանի անհատական ցուցահանդեսը - թերթ, «Հայաստանի Հանրապետություն», Ե., 25.09.2010

Երեկ մարդաշատ էր Հայաստանի նկարչի տան առաջին հարկի մեծ ցուցասրահը։ Այստեղ իր ավելի քան 40 տարվա աշխատանքների ընտրանին էր ներկայացնում Երեւանի գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Իսաբեկյանը։ Նրա անհատական ցուցահանդեսը բացվեց ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի, վարչապետ Տիգրան Սարգսյանի, այլ պաշտոնատար անձանց, գրականության եւ արվեստի անվանի գործիչների, հոգեւոր եւ աշխարհիկ այրերի, օտարերկրյա դիվանագետների, ուսանողների ներկայությամբ։

Ողջունելով եւ շնորհավորելով ցուցահանդեսի բացումը՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն ասաց. «Ի դեմս Իսաբեկյանի մենք տեսնում ենք ոչ միայն նկարչի, ով ունի հստակ քաղաքացիական դիրքորոշում եւ մտավորականի կեցվածք, այլեւ անհատականության, ով դաստիարակում է երիտասարդ սերունդներ, եւ վստահ եմ, որ այսօր հայտնվելով այս ցուցահանդեսում, դուք կհամոզվեք, որ մեր երիտասարդների դաստիարակությունը գտնվում է հուսալի ձեռքերում, եւ նրա արվեստը, կարծում եմ, որ ոգեւորելու է բոլորիս»։

Հայաստանի նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանն ասաց. «Մեր շրջապատում քչերը կան, որ կարողանում են այսպիսի եռանդուն գործունեություն ծավալել, նկարիչներից մատների վրա կհաշվեք այն հեղինակներին, ովքեր կարող են ստեղծագործել եւ միեւնույն ժամանակ ունենալ կազմակերպչական ձիրք ու փորձ։ Այդպիսին է Արամ Իսաբեկյանը, որ մեզ է բերել գործեր, որոնք լի են մտածումներով, խորիմաստ իղձերով, մտորումներով աշխարհի եւ այսօրվա մասին, մեր պատմության ու տեսակի մասին։ Ե՛վ գրաֆիկական, ե՛ւ գեղանկարչական աշխատանքներում առկա է նրա «ես»–ը, որը վկայում է հասուն, բարձր վարպետություն ունեցող ստեղծագործողի մասին»,–ասաց Կ. Աղամյանը։

ՀՆՄ նախագահն ավելացրեց, որ աշխատանքներն այնքան շատ էին, որ կարելի էր տեղավորել բոլոր երեք սրահներում, սակայն մեկ սրահն էլ բավական է, որ ասենք, թե գործ ունենք հեղինակավոր նկարչի հետ։

Շնորհակալություն հայտնելով ներկաներին՝ Ա. Իսաբեկյանն ասաց, որ ցուցահանդեսում կան ավելի քան 40 տարվա նկարներ, եւ ցուցադրանքը իր աշխատանքների ընդամենը մեկ տասներորդ մասն է կազմում։

Ցուցահանդեսը դիտողների թվում էր արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լեւոն Չուգասզյանը, ով իր տպավորությունները հայտնեց «ՀՀ»–ի թղթակցին։

«Ցուցահանդեսը Իսաբեկյանի չորս տասնամյակների ձեռքբերումն է: Այն ամենը, ինչ տեսնում ենք, քայլ առ քայլ ցույց է տալիս նկարչի համոզմունքը, ներկապնակի հարստացման, աշխատաեղանակի ձեւավորման տարբեր աստիճանները:

Արամ Իսաբեկյանը ծնվել է գեղարվեստական ընտանիքում: Նրա մայրը կյանքից վաղ հեռացած սքանչելի նկարչուհի Արփենիկ Նալբանդյանն է, եւ հայրը մեր նկարչության կարեւորագույն դեմքերից է՝ Էդուարդ Իսաբեկյանը, ովքեր ստեղծել են այն մթնոլորտը, որում ձեւավորվել են նկարչի ճաշակը, հետաքրքրությունները, մտածողությունը: Եվ ահա նա մեզ ներկայանում է իբրեւ լուրջ արվեստագետ, որ կարողանում է կարեւոր ձեռքբերումներ ունենալ մեր նկարչության անդաստանում եւ նրանում իր կարեւոր խոսքն ասել, չնայած վարչական ծանրաբեռնվածությանը:

Այս ցուցահանդեսը մեր այսօրվա մշակութային կյանքում շատ անհրաժեշտ երեւույթ է»,–ասաց նա:

Վանիկ ՍԱՆԹՐՅԱՆ

http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20100925_9&flag=am